



Գիտական այս գործիքին գործունեության տեւողութիւնն է 10 տարի: Հիմնական նպատակը պիտի ըլլայ երկրի եւ լուսնի ճշգրիտ հեռաւորութիւնը չափել տարուան զանազան ժամանակաշրջաններուն՝ լէզըր ճառագայթներու արձակումով: Նաեւ գործիքը ճշգրիտ գիտական տեղեկութիւններ պիտի հաղորդէ հրաբխային ժայթքումներու եւ այրող երկնաքարերու բախումներու պատճառով յառաջացած վիճակներու շուրջ:

Լեւոն Պապլուզեան, որ կը նկատուի ADL-ի մասնագետներու կարելոր հեղինակութիւններէն մէկը իր ուսումը ստացած է Միացեալ Նահանգներու մէջ: Ապա Հալէպ վերադարձած ու իր մասնակցութիւնը բերած է Հալէպի ազգային եւ մարզական կեանքին մէջ: Միացեալ Նահանգներ հաստատուած է 1957-էն ի վեր:

## ՀԱՅՈՒ ԱՆՈՒՆ ԼՈՒՍՆԻՆ ՎՐԱՅ

Երբ «Ափոլլո 11» լուսնի հասնի հրթիռի երկրորդ բաժանմունքին մէջ, ուր հաստատուած է լուսնային կառը (մոտիւլ լիւնէր), գիտական նուրբ եւ զգայուն գործիք մը՝ յղացուած եւ շինուած ADL-ի մասնագետներուն կողմէ, կայք պիտի հաստատէ լուսնի վրայ: Այս գործիքը կը կոչուի Laser Ranging Retro Reflector Array (LRRRA) եւ կը կշռէ 65 լիպրա:

Յիշեալ գործիքին վրայ արձանագրուած են տասը անուններ՝ մասնաւոր մետաղեայ պիտակներով, որոնցմէ մէկը հալէպահայ ՀՍԸՄ-ի սկաուտ ընդհանուր խմբապետ եղբ. Լեւոն Պապլուզեանն է:



ԹԻՒԸ ՊԱՏՐԱՍՏԵՑ՝ ՈՒՐԱ ԿԱՐԵԱՆ-ՏԻՔՄԻՔԵԱՆ ՆԿԱՐԱԶԱՐՈՒՄԵՑ՝ ՈԱՅՖԻ ՔԵՇՈՒՄԵԱՆ

# ԳԻՏԵԻՐ, ԹԵ... ՖՈՒԹՊՈՒԼԻ ԱՇԽԱՐՀԵՆ



\* Տենիս Պերկքամբ՝ Հոլանտայի ֆութպոլի պատմության ամենելա խաղացողներն մեկը, չկրցաւ մասնակցիլ Ճափոնի մէջ տեղի ունեցած 2002-ի ախոյեանութան, որովհետեւ ան դժուարութիւն ուներ օդանաւով ճամբորդելու:

\* Ֆութպոլի աշխարհի ախոյեանութան բաժակը շինուած է 5 քիւոսկիէ:

\* Գերմանացի մարզիկ Միրոսլաւ Զլոզը ախոյեանութան պատմութեան ամենէն շատ կոլեր արձանագրած մարզիկն է: Ան նշանակած է 16 կոլ, որմէ իր առաջինը արձանագրած է 24 տարեկանին՝ 2002-ին, եւ վերջին կոլը 36 տարեկանին՝ 2014-ի ախոյեանութեան:


\* Ախոյեանութեան պատմութեան մէջ մէկ մրցումի ընթացքին ամենէն շատ կոլեր արձանագրուեցաւ 1982-ին, Հունգարիոյ եւ Սալվարի միջեւ 10-1:

\* Աշխարհի ֆութպոլի ախոյեանութեան պատմութեան առաջին կոլը նշանակեց ֆրանսացի Լիաիեան Լորանը, Ուրուկուէյի մէջ տեղի ունեցած մրցումին ընթացքին 1930-ին:

\* 1958-ին պրագիլցի մարզիկ Վաւա շատ կարելոր կոլ մը նշանակեց Ռուսիոյ դէմ: Միւս մարզիկները այնքան բարձր գնահատեցին զայն, որ ան իր ուշքը կորսնցուց:



Փորձէ՛ օգնել որդին, որպէսզի գտնէ ճիշդ ճամբան ու հասնի համեղ խնձորին:



Այս պատկերները եթէ գունաւորես նախասիրած գոյներովդ շատ աւելի գեղեցիկ պիտի ըլլան:



# ԱԼԱ ԷՏՏԻՆՆ ՈՒ ԼԱՄԲԸ



Ասկե շատ տարիներ առաջ, Պաղտատ քաղաքին մեջ կ'ապրեր Ալա Էտտին անունով տղայ մը: Ան մեկ հատիկ գաւակն էր իր մօր: Անոր հայրը շատոնց մահացած էր:

Օր մը Ալա Էտտին շուկայ կ'երթայ գնումներ կատարելու: Ճամբան օտարական մը կը մօտենայ իրեն ու կը բարեւ: Ալա Էտտին կը զարմանայ:

- Ես հօրդ հին բարեկամն եմ,- կ'ըսէ օտարականը: Պաղտատ եկած եմ կարելոր գործով եւ պետք ունիմ բարեկամի մը օգնութեան:
- Ինչպէ՞ս կրնամ օգտակար դառնալ քեզի:
- Խնդրե՛մ, հետս եկուր, ճամբան կը բացատրեմ:

Օտարականը Ալա Էտտինը կը տանի հեռու, շա՛տ հեռու տեղ մը: Այնտեղ կրակ կը վառէ ու կը սկսի տարօրինակ շարժումներ ընել:

Յանկարծ գետինը կը դողդայ: Յսկայ ժայռ մը տեղէն կը շարժի ու սանդուխներով փոս մը կը բացուի: Ալա Էտտին կը սարսափի, կ'ուզէ փախչիլ: Կախարդը կը քաշէ անոր թելէն ու կ'ըսէ.

- Ես ափրիկեցի կախարդ մըն եմ: Եթէ հրամաններս չկատարես, քեզ կը կախարդեմ ու այս փոսը կը նետեմ: Հիմա լսէ ու գործադրէ՛ ինչ որ պիտի ըսեմ քեզի: Անմիջապէս կ'իջնես այս աստիճաններէն ու քիչ մը անդին ժայռի մը վրայ, լամբ մը կը տեսնես: Չգուշութեամբ կը վերցնես զայն ու կը բերես ինծի:

Երբ բերես, որպէս հատուցում՝ քեզի կը նուիրեմ այս թանկարժէք մատանիս:

Կախարդը խօսքը չաւարտած մատանին կ'իյնայ ձեռքէն ու կը գլորի փոսը:

Ալա Էտտին կը տատամսի, կատարե՞ կախարդին հրամանը թէ ոչ...: Բայց ինչպէ՞ս չկատարեր. հապա՞ եթէ

զինք կախարդեր...

Հետեւաբար՝ հլու, հնազանդ, կ'իջնէ աստիճաններէն... կ'երթա՛յ, կ'երթայ ու կը հասնի շա՛տ գեղեցիկ մարգագետին մը, ուր ծառերէն շողշողուն պտուղներ կախուած էին... Եւ ի՛նչ պտուղներ, գոհարներ՝, թանկագին քարերով ողկոյզներ՝:

Ալա Էտտինի աչքերը կը շլանան:

Ան ափ-ափ կ'առնէ գոհարներէն, կը լեցնէ գրպանները ու կախարդին մատանին մատը անցընելով՝ կը շտապէ դուրս:


Յանկարծ՝ «Լա՛մբը, լա՛մբը մոռցայ», կ'ըսէ ու կը վերադառնայ:

Երբ լամբը կը տեսնէ, կը զարմանայ. «Այս ի՛նչ հին ու փոշոտ լամբ է, կ'արժէ՞ ասոր համա զիս այսքան յոգնեցնել», կը մտածէ ան, զգուշութեամբ կը վերցնէ լամբը ու կը տանի կախարդին:

Կախարդը հագիւ լամբը տեսած՝ կը փորձէ խլել Ալատտինի ձեռքէն:

- Նախ դուրս ելլեմ, յետոյ կու տամ,- կ'ըսէ Ալատտին:
  - Եթէ լամբը չտաս, քեզ հոսկէ դուրս չեմ հաներ,- կը գոռայ կախարդը:
  - Լամբը չե՛մ տար, մինչեւ զիս հոսկէ դուրս չհանես,- կը պնդէ Ալա Էտտին:
- Կախարդը կը զայրանայ. «Քեզ հոս պիտի բանտարկեմ», կ'ըսէ ու հսկայ ժայռով կը փակէ քարայրին մուտքը:

(Շարունակելի)



# Ձի

# ԳԻՐԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԿԵՆԴԱՆԻՆԵՐ

# ՑՈՒԼ ԵՒ ԿՈՎ

Մարդիկ վայրի ձիերը ընտելացուցած են. ավելի քան վեց հազարամեակ առաջ դժուար էր պատկերացնել կնդանի մը, որ ավելի յարմար կ'ըլլար երթելու կամ ոչ մեծ բեռ տեղափոխելու համար: Ձիերը արագաշարժ են, շուտ սորվող եւ շատ գեղեցիկ: Անոր մարմին միջին երկարութիւնը 2.5 մէթր է, իսկ հետնաբաշին բարձրութիւնը 1.5 մէթր:

Ձիերը շատ լաւ կը լողան եւ դիրութեամբ կը յիշեն արօտավայրէն տուն վերադարձի ճամբան: Անոնք սուր հոտառութիւն եւ լսողութիւն ունին, նոյնիսկ կրնան հեռուէն զանազանել իրենց տիրոջ քայլերը:

Մինչեւ օրս ուժեղ ու գեղեցիկ ձիերը կը ծառայեն գիւղի մէջ ապրող մարդոց: Անոնք ապրանքներ կը տեղափոխեն եւ դաշտերու մէջ կ'աշխատին:

Ձիերուն սմբակները կ'ամրացնեն երկաթ պայտերով, որոնք ոտքերը կը պաշտպանեն կոտրուածքներէ:

Ձիերը կրնան մինչեւ 40-50 տարի ապրիլ:



Ցուլը եւ կովը կենդանիներու միեւնոյն տեսակին կը պատկանին՝ ընտանի խոշոր եղջերաւորներուն: Այդ կենդանիները մարդուն բազմաթիւ օգուտներ կու տան՝ ապահովելով կաթ, միս եւ կաշի:

Արուն ցուլ կը կոչենք, էգը՝ կով իսկ ձագը՝ հորթ:

Ցուլերը եւ կովերը երկնդակաւոր կաթնասուններու խումբին կը պատկանին:

Ռուսաստանի մէջ տարածուած կովերը ուղիղ մէջք ունին՝ առանց ընդգծուած ծոծրակի: Իսկ Ասիոյ, Ափրիկէի, Հարաւային Ամերիկայի մէջ ապրող կովերը ընդհանրապէս սապատաւոր են:

Կովերը 200-700 ք.կ. եւ ավելի կշիռք կ'ունենան... Անոնց մարմինը ծածկուած է շիկակարմիր, սեւ կամ սեւ-ճերմակ, կարճ մազածածկոյթով: Կենդանիին լայն ճակատին երկու եղջիր կ'աճի:

Կովերը որոճացող կենդանիներ են: Երբ հորթերը 3 շաբաթական կ'ըլլան, կը սկսին որոճալ: Որոշ ժամանակ անց չմարսուած կերը ստամոքսէն ետ կը մղուի դէպի բերանի խոռոչ: Դանդաղօրէն ծամելով՝ կենդանին մէկ ժամուան ընթացքին կը մանրէ այն:

Կովերը դանդաղ ու հանդարտ կենդանիներ են, իսկ ցուլը շատ վտանգաւոր կրնայ ըլլալ, եթէ որեւէ բանէ կատողի:

Կենդանին տաք գոմի մէջ կը պահուի, բայց ամէն օր դուրս կը հանեն եւ ազատ կ'արձակեն, որպէսզի կովը բաւականաչափ կաթ տայ:

Կովերու եւ ցուլերու կեանքի տևողութիւնը գրեթէ 30 տարի է: Էգը տարեկան 1, հագուադէպ՝ 2 հորթի ծնունդ կու տայ, որոնք մեծ կը համարուին 3 տարեկանին:

